ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՁԱՐՈՒՑԵԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 43 - 44 (16438) ՇԱԲԱԹ, 4 ՀՈՒՆԻՍԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏՈՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ



Հունիսի 2-ին Վրաստանում նշվեց Ոստիկանության օրը:

Հանդիսավոր միջոցառմանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, երկրի կառավարության եւ խորհրդարանի անդամները, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները: Միջոցառմանը հատուկ հյուրի կարգավիճակով ներկա էին նաեւ Լիտվայի, Մոլդովայի եւ Բելառուսի ներքին գործերի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՖՐԱՆՍԻԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ

Ֆրանսիական Բորդո քաղաքում անցկացված «Գինու քաղաք» միջոցառման շրջանակներում, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի հետ:

Հանդիպմանը Ֆրանսուա Օլանդը հաստատեց Ֆրանսիայի դիրքորոշումը Վրաստանի հետ անայցեգրային պայմանակարգի հաստատման հարցում: Ֆրանսիայի նախագահը դրական գնահատական տվեց Վրաստանում անցկացված բարեփոխումներին եւ անայցեգրային

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՅՑ

ՆՈՐ ԷՋ՝ ՎՐԱՀ-ՍԼՈՎԱԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՍԼՈՎԱԿԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԽԱԼՑԻԽԵ

Մայիսի 30-ին պետական այցով Վրաստան ժամանեց Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկան:

Դա Սլովակիայի ղեկավարի առաջին այցն է Վրաստան: Նույն օրը տեղի ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպումը իր սլովակ գործընկերոջ հետ: Հանդիպմանը կողմերը քննարկեցին երկկողմ հարաբերությունների հարցեր: Կողմերը քննարկեցին նաեւ Վրաստանի բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակի հարցը:

Մայիսի 31-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկան եղան Ցխինվալիի տարածաշրջանի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐԴԱՏՈՆ - 2016

ՍԻՐՈ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Ինչպես միշտ, մայիսյան վերջին կիրակի օրը լեփ-լեցուն էր մայրաքաղաքի հնաշունչ «Մեյդան» թաղամասի Վախթանգ Գորգասալու անվան հրապարակը: Հյուրերը նախ վարդեր են դնում հրապարակին կից Սուրբ Գեւորգ եկեղեցու բակում հանգչող միջնադարի հայ հանճարեղ աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի (1712-1895) շիրիմին, ապա շտապում դեպի հրապարակ, որտեղ վերջին մի քանի տարիներին հատուկ այդ օրվա համար սարքված բեմից հնչում են ելույթները եւ գեղարվեստական կատարումները:

Միջնադարի հանճարին, երեք լեզվով ստեղծագործող (հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն) աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովային նվիրված 102-րդ «Վարդատոնը» սկսվում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի օրհնությամբ: Իր խոսքը եպիսկոպոսն ավարտեց պատգամով. «Սայաթ-Նովան միավորեց բոլորին իր երգով, մենք եւս միավորվենք սայաթ-նովյան գեղեցիկ երգով եւ Վրաստանում ու աշխարհի տարբեր անկյուններում ապրելով, միաբանվենք մեր հավատքի, մեր մշակույթի շուրջ»:

Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Գիորգի Ալիբեգաշվիլին, ջերմորեն ողջունելով իր բազմալեզու համաքաղաքացիներին, ընդգծեց. «Մենք ձեզ հետ միասին պետք է կանգնենք մեջքմեջքի եւ հզորացնենք ու մասնակից դառնանք մեր երկրի զարգացմանը: Աստված թող է՛լ ավելի հզորացնի մեր երկիրը եւ մեր միասնությունը»:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 28-Ը՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԱՅՍ ՏՈՆԸ ՄԵԶ ՀԱՄԱՐ ՓՐԿՈՒԹՅԱՆ ՏՈՆ Է»

Մայիսի 28-ին աշխարհասփյուռ հայությունը նշեց Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրման եւ Սարդարապատի ճակատամարտում պատմական հաղթանակի 98-ամյակը՝ Հանրապետության տոնը:



Այդ օրը Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի,

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՄԵԾ ԵՂԵՌՆ-101

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԲՈՒՆԴԵՍԹԱԳՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

2016 թվականի հունիսի 2-ին Գերմանիայի Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւը, որն ունի «1915թ. հայերի եւ մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության հիշատակի եւ ոգեկոչման մասին» անվանումը:

Բանաձեւն ընդունվեց՝ ունենալով ընդամենը մեկ դեմ, մեկ ձեռնպահ ձայն:

Բանաձեւը համատեղ կազմել եւ ներկայացրել են իշխող կոալիցիայի անդամներ Քրիստոնեա-դեմոկրատական միություն (CDU) եւ Քրիստոնեական-սոցիալական միություն (CSU), Սոցիալ-դեմոկրատական (SDP) եւ ընդդիմադիր Կանաչների կուսակցությունները:

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը շնորհակալական հեռագրեր է հղել Գերմանիայի նախագահ Յոախիմ Գաուկին, կանցլեր Անգելա Մերկելին եւ Բունդեսթագի նախագահ Նորբերտ Լամերտին: Հայաստանի նախագահը խորին շնորհակալություն է հայտնել նրանց եւ Գերմանիայի բոլոր այն քաղաքական եւ հասարակական ուժերին, որոնք իրենց վճռական խոսքն ասացին այս հարցում:

Նույն օրը, երեկոյան, Թբիլիսում, Գերմանիայի դեսպանատան առջեւ, մի խումբ թբիլիսահայեր անցկացրեցին ցույց, որի մասնակիցներն իրենց շնորհակալությունը հայտնեցին Գերմանիայի կառավարությանը Ցեղասպանությունը դատապարտող բանաձեւը ընդունելու կապակցությամբ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ ԱՅՑԵԼԵՑ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՐԿՐԱՄԱՍ

Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը կատարել է աշխատանքային այց Վրաստանի Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան: Այցի շրջանակներում, Ախալցիխեում դեսպան Վարդանյանը հանդիպում է ունեցել Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Ակակի Մաճուտաձեի հետ:

Հանդիպման օրակարգի հիմնական թեման վերջերս տեղի ազգությամբ հայ եւ վրացի երիտասարդների միջեւ տեղի ունեցած միջադեպի հետեւանքով ստեղծված իրավիճակն էր եւ դրա հաղթահարմանն ուղղված քայլերը: Այս առումով, դեսպան Վարդանյանը իր խորը մտահոգությունն է հայտնել նահանգապետին եւ հույս հայտնել, որ միջադեպերի մեղավորները

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏՈՆ

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նախարարները, այլ երկրների պաշտոնական անձինք:

Միջոցառմանը ողջույնի խոսքով ելույթ ունեցավ Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Մղեբրիշվիլին: Նա հակիրճ հաշվետվություն ներկայացրեց իր գլխավորած գերատեսչության աշխատանքի վերաբերյալ:

Հանդիսությանը ելույթ ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին: Նա ոստիկաններին շնորհավորեց տոնի կապակցությամբ եւ շնորհակալություն հայտնեց ծառայության համար: Իր խոսքում, վարչապետը հարգանքի տուրք մատուցեց այն ոստիկաններին, ովքեր զոհվել են ծառայական պարտականությունների կատարման ժամանակ:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին իր ելույթում հիմնական շեշտը դրեց իրավախախտումների դեմ համատեղ գործունեության համակարգման վրա: Նախագահի խոսքերով, այդ նպատակով էլ երկրի ՆԳ նախարարությունը խորացնում է համագործակցությունը եվրոպական երկրների հետ եւ Եվրամիության 15 երկրների հետ արդեն ստորագրվել է համագործակցության համաձայնագիրը:

Հանդիսության շրջանակներում, պարգեւներ հանձնվեցին ծառայական պարտականությունները բարեխիղճ կատարած ոստիկաններին:

ԱՅՑ

ՆՈՐ ԷՋ՝ ՎՐԱՑ-ՍԼՈՎԱԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

սահմանային Խուրվալեթի գյուղը: Նախագահները տեղում ծանոթացան ստեղծված իրավիճակին, հանդիպում ունեցան տեղի բնակիչների հետ:

Այցի շրջանակներում, երկու երկրների նախագահները մասնակցեցին վրացսլովակյան բիզնես-ֆորումին:

Բիզնես-ֆորումի շրջանակներում, Վրաստանի ներդրումային գործակալությունը եւ Սլովակիայի զարգացման գործակալությունը ստորագրեցին համագործակցության հուշագիր: Այցի շրջանակներում, անցկացվեցին գործարարների երկկողմ հանդիպումներ:

* * *

Սլովակիայի նախագահ Անդրեյ Կիսկան Վրաստան՝ պետական այցի շրջանակներում, այցելեց Ախալցիխեի Ռաբաթի բերդ ու թանգարան: Սլովակիայի նախագահին ուղեկցում էր Ախալցիխեի քաղաքապետ Գիորգի Կոպաձեն: Հյուրը տեղում ծանոթացավ թանգարանային նմուշներին եւ դրանց պատմությանը:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՖՐԱՆՍԻԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պայմանակարգի հաստատման գործընթացում երկրի ձեռքբերումներին:

Երկու երկրների ղեկավարները մանրամասն խոսեցին անայցեգրային պայմանակարգի ծրագրով նախատեսված տեխնիկական հարցերի մասին, ընդգծեցին այդ գործընթացի քաղաքական նշանակությունը Վրաստանի արեւմտյան վեկտորի տեսանկյունից:

Հանդիպմանը Ֆրանսիայի նախագահը Վրաստանի վարչապետին եւ վրաց ժողովրդին շնորհավորեց պետական Անկախության վերականգնման 25-ամյակի առթիվ:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆՆ ԱՅՑԵԼԵՑ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻԻ ԵՐԿՐԱՄԱՍ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հանդիպում Ախալքալաքիում

արժանի պատիժ կստանան, եւ հստակ քայլեր կձեռնարկվեն նման միջադեպերը հետագայում բացառելու ուղղությամբ:

Նահանգապետ Մաչուտաձեն Հայաստանի դեսպանին վստահեցրել է, որ կշարունակի իր անմիջական վերահսկողության տակ պահել միջադեպի առնչությամբ հարուցված երկու քրեական գործերի ընթացքը, եւ զարգացումների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն կտրամադրի հայկական կողմին:

Այցի շրջանակներում, Յուրի Վարդանյանն այցելել է նաեւ Ախալքալաքի, որտեղ հանդիպում է ունեցել Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Պետրոսյանի, Ախալքալաքիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Համլետ Մովսիսյանի, Ախալքալաքիի մունիցիպալիտետի վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանի եւ փոխնախագահ Հարություն Հովհաննիսյանի հետ: Հանդիպմանը քննարկվել է Ջավախեթիի տարածաշրջանի հայ ազգաբնակչությանը հուզող հարցերի լայն շրջանակ:

Յուրի Վարդանյանն ընդգծել է համայնքային կյանքի ակտիվացման համար հետեւողական քայլերի ձեռնարկման, համատեղ ծրագրերի մշակման անհրաժեշտությունը: Ապրիլի 23-ի դեպքերի համատեքստում դեսպան Վարդանյանը ներկայացրել է այս կապակցությամբ ունեցած իր հանդիպումների եւ հեռախոսազրույցների որոշ մանրամասներ:



ԹՈՒՐՔԻԱ

ՀԶՈՐ ՊԱՅԹՅՈՒՆ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

Մայիսի 31-ին Թուրքիայի Շիրնաքի նահանգի Սիլոպի քաղաքում, պայթյունի հետեւանքով, 4 քաղաքացիական անձ սպանվել, 19 մարդ էլ վիրավորվել է, որոնցից 5-ը՝ ոստիկան: Հեռահար կառավարման ինքնաշեն պայթուցիկը երեկոյան ժամերին փողոցում պայթել է այն պահին, երբ անցնում էր զրահապատ ոստիկանական ավտոմեքենան:

Նախնական վարկածով, պայթուցիկ սարքը տեղադրված է եղել կոյուղու դիտանցքում:

Ենթադրվում է, որ պայթյունն իրագործել են Քրդստանի աշխատավորական կուսակցության ազատամարտիկները:

ՄԻԳՐԱՑԻԱ

ՏԱՐԵՍԿԶԲԻՑ՝ 191 ՀԱԶԱՐ ՓԱԽՍՏԱԿԱՆ

Տարեսկզբից 191 հազարից ավելի միգրանտներ ու փախստականներ են հատել Միջերկրական ծովը՝ նպատակ ունենալով ապաստան գտնել Եվրոպայում: Այդ մասին հայտնել է Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) պաշտոնական ներկայացուցիչ Ջոել Միլմանը:

ՄՄԿ-ի տվյալների համաձայն, 2016 թվականի սկզբից մինչեւ մայիսի 21-ը ծովով Եվրոպա է ժամանել 191 հազար 134 մարդ: Դրա հետ մեկտեղ, 1370 մարդ զոհվել կամ անհետ կորել է:

ՄԱԿ

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է 245 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը հայտարարել է, որ աշխարհում հումանիտար օգնության պահանջը տարեկան հասնում է 245 մլրդ դոլարի, վերջին 15 տարում այդ թիվն աճել է 12 անգամ:

«Վերջին 15 տարվա ընթացքում, հումանիտար օգնության պահանջն աճել է 12 անգամ՝ հասնելով տարեկան 245 մլրդ դոլարի նշագծին: Ցավոք, ամեն ինչ խոսում է այն մասին, որ ճգնաժամերը շարունակվում են»,- ասել է Պան Գի Մունը:

Նա հորդորել է պետություններին, ոչ կառավարական, մասնավոր ու տարածաշրջանային կազմակերպություններին աջակցություն ցուցաբերել ՄԱԿ-ին երկարաժամկետ արդյունքի հասնելու նպատակով:

ԿՐԹԱԿԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐԵ ՋԵՋԵԼԱՎԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՓՈԽԱՐԻՆԵՑ ԹԱՄԱՐ ՍԱՆԻԿԻՁԵԻՆ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարի պաշտոնում նշանակվել է Ալեքսանդրե Ջեջելավան: Թամար Սանիկիձեին նախարարի պաշտոնում փոխարինողին ներկայացրեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

43-ամյա Ալեքսանդրե Ջեջելավան ավարտել է Թբիլիսիի Կոմարովի անվան փորձառնական դպրոցը, ապա Թբիլիսիի պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը, ESM բիզնես դպրոցը, որն այսօր հայտնի է «Ազատ հաալսարան» անվանումով:

Աշխատել է համակարգչային «Կոմպի» ընկերությունում, Վրաստանի Ազգային բանկում, ապա՝ «Ինտելեկտ բանկում»՝ որպես գլխավոր տնօրենի տեղակալ: 2010 թվականին, գործընկերների հետ միասին, հիմնել է «Կառավարման ակադեմիա», վարժանքի կենտրոն՝ գործող մենեջերների համար:

Ամուսնացած է, ունի երկու դուստր:

Վարչապետը հաջողություններ մաղթեց Թամար Սանիկիձեին, որը, ինչպես նշեց վարչապետը, իր «գործունեությունը կշարունակի այդ ուղղությամբ եւ այլ մանդատով»:

ՀՆՉԵՑ ԱՎԱՆԴԱԿԱՆ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ»

Թբիլիսիի թիվ 104 դպրոց

Վրաստանի հանրային դպրոցներում անցկացվեցին «Վերջին զանգին» նվիրված հանդիսություններ:

Թբիլիսիի թիվ 104 հայկական դպրոցում անցկացված «Վերջին զանգին» նվիրված տոնական միջոցառմանը մասնակցեցին եւ շրջանավարտներին բարի երթ մաղթեցին դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության երկրորդ քարտուղար Էլինա Մկրտչյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, բանաստեղծ, թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանը, Վրաստանի կրթության նախարարության աշխատակցուհի Կարինե Մանուկյանը, Վիրահայոց թեմի Սուրբ Էջմիածին եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Նարեկ քահանա Ղուշչյանը, վաստակաշատ մանկավարժ Նորայր Բաղդասարյանը, դասղեկ Իզաբելլա Աբրահամյանը, Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը, Վրացահայերի միության ՀԿ ներկայացուցիչ Մարի Առաքելովան, «Արեւիկ» հիմնադրամի նախագահ Էմմա Ախտյանը, ուրիշներ:

* * *

Սամցխե-Ջավախեթիի դպրոցներում հնչեց ավարտական վերջին զանգը: Երկրամասի շուրջ 130 հանրային հայկական դպրոցների մոտ 1500 շրջանավարտներ հրաժեշտ տվեցին հարազատ կրթօջախներին:

Աննա Սարիբեկյան

Ախալքալաքիի թիվ 4 դպրոց

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՎԱՆԴՈՒՅԹ

«ՆԻՆՈՈԲԱՆ»՝ ՓԱՐՎԱՆԱ ԼՃԻ ԱՓԻՆ

Հունիսի 1-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշում է երկրում քրիստոնեությունը տարածած սրբի՝ Սուրբ Նինոյի օրը՝ «Նինոոբան»: Նշենք, որ Վրաց եկեղեցական օրացույցում Սուրբ Նինոյին նվիրված երկու օր կա՝ հունվարի 27-ը՝ Սրբի մահվան հիշատակի օրը եւ հունիսի 1-ը՝ Նինոյի Վրաստան մուտք գործելու օրը:

Ավանդաբար, Սուրբ Նինոյի տոնը նշվում է Նինոծմինդայի մունիցիպալիտետի Փոկա գյուղի հարակից տարածքում, Փարվանա լճի ափին, որտեղ առաջին անգամ կանգ է առել Նինոն: Այստեղ էլ մատուցվեց տոնական պատարագ, որին ներկա էին Վրաց Ուղղափառ եկեղեցու բարձրաստիճան հոգեւոր առաջնորդներ եւ ուխտավորներ՝ երկրի բոլոր տարածաշրջաններից: Այստեղ էին նաեւ հարակից հայաբնակ գյուղերի բնակիչները:

Միջոցառմանը ներկա էին նաեւ Նինոծմինդայից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, Նինոծմինդայի մունիցիպալիտետի վարչության եւ սակրեբուլոյի նախագահներ Գագիկ Կարսլյանն ու Սմբատ Կյուրեղյանը, պաշտոնական այլ անձինք:

Պատմական տվյալներով, Սուրբ Նինոն ծնվել է Կապադովկիայում, 280 թվականին: 12 տարեկանում ծնողները նրան ուղարկել են Երուսաղեմ՝ դաստիարակվելու քրիստոնեական ոգով: Հետագայում Նինոն սկսեց քրիստոնեության քարոզչությունը Հարավային Կովկասում, մասնավորապես՝ Վրաստանում: Նա Վրաստան մուտք գործեց Հայաստանից, 319 թվականին: Բազում փորձություններից հետո, նրա նպատակը կատարվեց՝ Սուրբ Նինոյի ջանքերով Վրաստանում սրբի կողմից մկրտվեցին Վրաստանի թագավոր Միրիանն ու թագուհի Նանան, որից հետո Վրաստանը Քրիստոնեությունն ընդունեց որպես պետական կրոն:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՎԵՏՈ՝ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին վետո է դրել «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում իրականացվելիք փոփոխությունների վրա:

Նշենք, որ պետության ղեկավարը խորհրդարանի կողմից ընդունած օրենքի փոփոխությունները առաքել էր Վենետիկի հանձնաժողովին, որի դիրքորոշումը հրապարակվեց անցյալ շաբաթ: Ինչպես հայտարարեց նախագահը, հանձնաժողովի կողմից ստացած դիտողություններից հետո, ինքը խորհրդատվություն է անցկացրել վարչապետի հետ: Գիորգի Մարգվելաշվիլին հույս ունի, որ խորհրդարանը հաշվի կառնի ներկայացրած դիտողությունները:

Նախագահական վետոյի կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հայտարարեց, որ ինքը հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի մեծամասնությունը համաձայնի նախագահական վետոյում ներկայացված դիտողություններին, եւ որպեսզի դադարեցվեն խոսակցությունները դրա երկարաձգման մասին: Վարչապետը հաստատեց այն փաստը, որ նախագահի հետ այդ հարցը քննարկել է, եւ իրենք պայմանավորվել են հիմնել այնպիսի մոդել, որը լրիվությամբ կհամապատասխանի Վենետիկի հանձնաժողովի պահանջներին: «Նախագահի հետ կոնստրուկտիվ խոսակցություն ունեցավ, որին մասնակցեցին խորհրդարանի նախագահը եւ պատգամավորները, ովքեր անմիջականորեն աշխատում էին այդ հարցի շուրջ: Մենք պայմանավորվեցինք հիմնել այնպիսի մոդել, որը լրիվությամբ համապատասխանի Վենետիկի հանձնաժողովի պահանջներին, եւ միաժամանակ հաշվի առնի մեր դիտողությունները: Գտնում եմ, որ մենք հիանալի նախադեպ ենք ստեղծել նման կոնստրուկտիվ երկխոսության համար»,- հայտարարեց վարչապետը:

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՅՄԱՆ ԴՅՈՒՐԱՑՄԱՆԸ

Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը կառավարությանը կոչ է արել վրացական սփյուռքի ներկայացուցիչների համար դյուրացնել Վրաստանի քաղաքացիության հանձնման ընթացակարգը:

«Սփյուռքը Վրաստանի անկապտելի մասն է, ուստիեւ նրա յուրաքանչյուր անդամը պետք է լինի Վրաստանի քաղաքացի: Ցանկանում եմ դիմել մեր կառավարությանը, արդարադատության նախարարությանը, որպեսզի նրանց համար դյուրացվի քաղաքացիության շնորհման ընթացակարգը»,- հայտարարեց Կաթողիկոս-Պատրիարքը:

Իր հերթին, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին խոստացավ աշխատել Կաթողիկոս-Պատրիարքի նախաձեռնությամբ մարմնավորման շուրջ՝ նշելով, որ այդ ուղղությամբ հիմնախնդիրներ գործնականում գոյություն չունեն: «Մենք կաշխատենք կաթողիկոսի նախաձեռնության շուրջ, թեպետ ցանկանում եմ նշել, որ արդեն այսօր բոլոր նրանց համար, ովքեր ծնվել են Վրաստանում, ովքեր ունեցել կամ չեն ունեցել Վրաստանի քաղաքացիություն, սակայն ծնվել են Վրաստանում, ովքեր նախկինում ունեցել են խորհրդային, սակայն չեն ունեցել վրացական անձնագրեր, բայց ծնվել են Վրաստանում, արդարադատության նախարարության եւ Վրաստանի նախագահի աջակցությամբ, նրանց ավտոմատորեն տրվում է երկրորդ քաղաքացիություն, այսինքն՝ Վրաստանի քաղաքացիություն: Գործնականում այդ առումով հիմնախնդիրներ չկան»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

ԿԱՆԽԱԳԾՈՒՄ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԱՅՍ ՏԱՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԿԳԵՐԱԶԱՆՑԻ 3 ՏՈԿՈՍԸ»

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու կանխագծումներով, այս տարի Վրաստանում տնտեսական աճը կգերազանցի 3 տոկոսի բնագիծը:

«Տվյալները, որ ներկայումս ունենք, թույլ են տալիս վստահությամբ նշել, որ այս տարի տնտեսական աճը 3 տոկոսից ավելի կլինի»,- հայտարարեց նախարարը եւ հավելեց, որ ընթացիկ տարվա փետրվար ամսից երկրում տնտեսական աճը կայունորեն մեծանում է: «Ապրիլին նշանակալի ակտիվություն գրանցվեց: Առկա տվյալները թույլ են տալիս վստահությամբ ասել, որ տնտեսական աճը 3 տոկոսից ավելի կլինի: Դա հաստատում է նաեւ վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկը: Այն տնտեսական աճի կանխագծային ցուցանիշը հասցրել է 3-4 տոկոսի: Որքանով տեղեկացված եմ, նման դրական միտում են վավերացնում նաեւ մյուս միջազգային կազմակերպությունները, այդ թվում՝ Արժույթի միջազգային հիմնադրամը»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

ԲԱՆԱԿ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Մայիսի 31-ից Վրաստանի պաշտպանության նախարարությունը քաղաքացիներին հրավիրում է զինծառայության եւ առաջարկում նրանց պայմանագրեր կնքել:

Ինչպես տեղեկացրել է գերատեսչությունը, քառամյա պայմանագրային զինծառայության ընդունվում են 18-ից մինչեւ 35 տարեկան զորակոչիկներն ու այն երիտասարդները, ովքեր արդեն անցել են պարտադիր կամ պայմանագրային զինծառայությունը:

Չորս տարվա ընթացքում զինծառայողները կստանան 950 լարիի չափով աշխատավարձ: Պայմանագրային զինծառայության մեջ գտնվող անձանց աշխատավարձը կավելանա՝ կախված կոչումից, պաշտոնից եւ զինվորական ստաժից: Նրանք կապահովվեն արդի հանդերձանքով, բարձրորակ անվճար բուժսպասարկմամբ, ինչպես նաեւ ընտանիքի բոլոր անդամների համար սոցիալական եւ իրավական պաշտպանությամբ:

Պայմանագրային զինծառայությունը, բարձր աշխատավարձից բացի, ընձեռում է պաշտոնական առաջընթացի հնարավորություն: Զինծառայողները նաեւ կարող են վրաց եւ օտարերկրյա հրահանգիչների օգնությամբ բարձրացնել մասնագիտական նախապատրաստության մակարդակը, յուրացնել օտար լեզուն եւ մասնակցել միջազգային գործողություններին»,- նշված է պաշտպանության նախարարության հրապարակած բացատրագրում:



ԱՆՑԿԱՑՎԵՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Մայիսի 30-ին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու նախագահությամբ, անցկացվեց ազգային անվտանգության խորհրդի նիստ, որին մասնակցեցին խորհրդի բոլոր անդամները:

Նիստում քննարկվեց բռնազավթված տարածքների երկայնքով ստեղծված իրավիճակի, մասնավորապես, Խուրչայում տեղի ունեցած միջադեպի հարցը: Քննարկվեց նաեւ Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում վրացական ստորաբաժանման թվաքանակի ավելացման հարցը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵՑ ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Եվրամիության անդամ երկրները հետածգել են Վրաստանի քաղաքացիների համար անայցեգիր ռեժիմի սահմանման հարցի վերաբերյալ որոշման ընդունումը: Համաձայնագրին դեմ են արտահայտվել Ֆրանսիան եւ Գերմանիան:

Այդ թեման քննարկվել է ԵՄ-ի մշտական ներկայացուցիչների կոմիտեում: «Թուրքիան, Ուկրաինան եւ Կոսովոն նույնպես պետք է այցեգրերի չեղարկման հետաձգման սպասեն, որովհետեւ դաշինքն ավելի զգուշավոր դիրք է բռնել ներգաղթի հետ կապված մտահոգությունների պայմաններում»,- նշել է երկրներից մեկի պատվիրակության ներկայացուցիչը: Ճշտվում է, որ Եվրոպայի քաղաքական գործիչները Վրաստանի հետ այցեգրային ռեժիմի հարցի քննարկմանը կվերադառնան հաջորդ շաբաթ, նախքան ձեռնամուխ կլինեն Ուկրաինայի շուրջ համանման բանակցություններին:

ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ ՆՇՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՍԻՆԱԳՈԳԻ 275-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 30-ին Վրաստանի կառավարության ներկայացուցիչները մասնակցեցին Վրաստանում հնագույն սինագոգներից մեկի հիմնադրման 275 եւ դրա նորացման 153-ամյա հոբելյաններին:

Միջոցառմանը ներկա էին նաեւ Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, կրոնական ուղղությունների ներկայացուցիչներ եւ հյուրեր Իսրայելից:

Տոնական միջոցառումներն ավարտվեցին Ախալցիխեի «Մեսխեթի» դրամատիկական թատրոնում, որը նվիրված էր վրաց-հրեական 26-դարյա բարեկամությանը:

ԵԹԵ ՋՈՆԴԻ ԲԱՂԱԹՈՒՐԻԱՆ ՆՈՐԻՑ ԴԱՌՆԱ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ

Վրաց քաղաքագետ Ջոնդի Բաղաթուրիան վերջերս Մոսկվայում պարգեւատրվել էր Հայոց ցեղասպանության 100-ամյակի հուշամեդալով: Իր հերթին, Բաղաթուրիան խոստացավ, որ եթե խորհրդարանական ընտրությունների արդյունքներով հայտնվի խորհրդարանում, ապա կմշակի Վրաստանի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման օրինանախագիծը:

Բաղաթուրիան անուշադրության չմատնեց նաեւ Ռուսաստանում ապրող իր հայրենակիցներին: «Ռուսաստանում ապրում է 1 միլիոն 200 հազար վրացի: Նրանք աշխատում են գործարարության, արվեստի ոլորտներում, նախանձելի պաշտոնական առաջընթաց ունեն, սակայն հայտնի՞ է արդյոք դեպք, որ ԱՄՆ-ում, Եվրոպայում, Թուրքիայում ապրող վրացին հաջող կարիերա ունենա: Նման դեպքեր չեն եղել, քանի որ Վրաստանն Արեւմուտքին պետք է միայն որպես ռազմավարական ասպարեզ Ռուսաստանի դեմ»,- ընդգծեց Ջոնդի Բաղաթուրիան:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻՆ ԱՅՆ ԼԻԴԵՐՆ Է, ՈՐՆ ԱՅՍՕՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԵՐԿՐԻՆ»

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հրապարակել է նամակ, որտեղ ներկայացրել է իր նկատառումները երկրում ընթացող իրադարձությունների, քաղաքական միտումների եւ իր առաջիկա ծրագրերի մասին:

Վրաստանի նախկին վարչապետն իր բաց նամակում նշում է, որ ներկայիս վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին աչքի է ընկնում կարդացածությամբ, աշխատասիրությամբ, եւ այն լիդերն է, որն այսօր անհրաժեշտ է երկրին:

«Իմ այս նամակը եւ առաջիկայում ծրագրված հեռուստաելույթը ծառայում են այն նպատակին, որպեսզի հասարակությանը ներկայացնեմ իմ վերլուծությունն այն մասին, թե ինչու մենք պետք է աջակցենք «Վրացական երազանքին» ու նրա նախագահին: Կվիրիկաշվիլին այն լիդերն է, որն այսօր անհրաժեշտ է Վրաստանին»,-իր նամակում նշում է Բիձինա Իվանիշվիլին:

ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՆԱԽԸՆՏՐԱՐՇԱՎԻՆ

Վրաստանի նախկին վարչապետ, միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլին պնդում է, որ ինքն առաջիկա խորհրդարանական ընտրությունների հետ կապված անձնական շահեր չունի, բայց մտադիր է ակտիվ մասնակցություն ունենալ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության նախընտրական արշավին:

«Ես ապագա ընտրությունների հետ կապված ոչ մի անձնական պլան ու նպատակ չունեմ: Իմ միակ հոգսն այն է, որ 10-15 տարի անց այն գործը, որի հիմքը դրել են մեր նախնիները, բարեհաջող ավարտվի, եւ ես ձեզ հետ միասին ուրախանամ Վրաստանի կյանքով»,- գրված է Իվանիշվիլու բաց նամակում:

ԱՄՆ-Ի ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին մեծ նշանակություն է տալիս Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ հարաբերություններին:

Իր բաց նամակում նա գրում է, որ ԱՄՆ-ը Վրաստանի անկախության երաշխավորն է, եւ փորձության պահին հենց Ամերիկան է ցուցաբերել ամենանշանակալի ֆինանսական, ռազմաքաղաքական եւ բարոյական օգնությունն ու աջակցությունը:

«Խոսելով Վրաստանի արտաքին կողմնորոշումների մասին՝ առանձնակի ցանկանում եմ նշել ԱՄՆ-ի, մեր ռազմավարական գործընկերոջ հետ հարաբերությունները: Վերջին չորս տարիներին մեր երկրների միջեւ բարեկամությունը բարձրացվել է որակական նոր մակարդակի»,- գրում է Բիձինա Իվանիշվիլին:

ՆՊԱՏԱԿԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆ Է

Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին իր բաց նամակում պնդում է, թե երկրի իշխանությունները հնարավոր ամեն բան անում են Ռուսաստանի հետ հարաբերությունները նորմալացնելու համար:

«Արեւմտամետ քաղաքականությունը չի նշանակում, որ մենք հարգանքով չենք վերաբերվելու մեր հարեւաններին եւ հաշվի չենք առնելու նրանց շահերը: Ընդհակառակը, մեր ռազմավարությունը բարեկամական հարաբերությունների հաստատում է նախատեսում հարեւան եւ ոչ միայն հարեւան երկրների հետ»,- գրված է Իվանիշվիլու բաց նամակում:

«Մենք ամեն ինչ կանենք, որպեսզի առանց Վրաստանի շահերը վնասելու նորմալացնենք հարաբերությունները Ռուսաստանի հետ: Բացի այդ, մենք կխորացնենք կապերը կարեւոր գործընկերների ու բարեկամների՝ Թուրքիայի, Ադրբեջանի, Հայաստանի հետ»,- գրում է նա:

Դրա հետ մեկտեղ, նախկին վարչապետը նշել է, որ Վրաստանի համար արտաքին քաղաքականությունը եւ կողմնորոշիչը միանշանակ եվրատլանտյան ուղղությունն է:

«Մենք պետք է լավ հասկանանք, որ Եվրամիությանը Վրաստանի անդամակցությունը մոտակա օրակարգի հարց չէ: Մեզ հարկ կլինի նաեւ որոշակի ժամանակ սպասել, մինչեւ ՆԱՏՕ-ի անդամ դառնանք, քանի որ դա բարդ աշխարհաքաղաքական գործընթացի բաղադրիչն է, եւ դա կախված չէ միայն մեր ցանկությունից ու պատրաստվածությունից»,- ասված է նամակում:

ՀՐԱՏԱՊ

Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ ՀԻՊՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ ՎԵՐՑՆԵԼԻՍ

ՄՈՆԾՈՒՆՈ ՆԱՆԿՈ
TBC BANK

Հիպոթեքային վարկը բնակարանի կամ կոմերցիոն տարածքի ձեռքբերման համար նախատեսված բանկային սպասարկում է: Բանկն առավել մատչելի եւ գործուն պայմաններ է առաջարկում այն սպառողներին, ովքեր ցանկանում են օգտվել վերոնշյալ վարկից: Ո՞րն է այն նշանակալից տեղեկատվությունը, որը պարտադիր կարգով պետք է իմանա ցանկացած քաղաքացի, ով որոշել է հիպոթեքային վարկ վերցնելու համար դիմել բանկին: Այս թեմայով հարցազրույց TBC բանկի տարածաշրջանային տնօրեն ԼԵՎԱՆ ԴԻԱՍԱՄԻՁԵԻ հետ:

- Ի՞նչ է հիպոթեքային վարկը, եւ ինչո՞վ է այն տարբերվում սպառողական վարկից:

- Հասարակայնության մոտ հիպոթեքային հասկացողության կապակցությամբ տարբեր մեկնաբանություններ են տարածված: Շատ հաճախ հիպոթեքային վարկ են համարում անհրաժեշտ գույքով ապահովագրված ցանկացած վարկը, այդ արտահայտությունը հաճախ օգտագործում եւ ներդնում են միկրոֆինանսական կազմակերպությունները՝ գումարի ապահովագրման եւ ոչ թե գումարի նպատակային օգտագործման համար: Թեպետ բանկային տարածքում հիպոթեքային վարկի հիմնական տարբերությունները վարկի մյուս տեսակներից դրա նպատակայնությունն է, որը կարող է լինել անշարժ գույքի՝ տան, ամառանոցի, հողամասի եւ այլնի ձեռքբերումը: Հենց բնույթով եւ նպատակային բաղադրիչով էլ հիպոթեքային վարկը տարբերվում է սպառողական վարկից: Եթե մի դեպքում նպատակը անշարժ գույքի ձեռքբերումն է, ապա երկրորդ դեպքում նպատակը կարող է լինել սպառողական կարիքների բավարարումը (օրինակ, հեռուստացույցի, բջջային հեռախոսի կամ այլ իրի գնումը):

- Ո՞ր հարցերի վրա պետք է սպառողը բեւեռի ուշադրությունը հիպոթեքային վարկ վերցնելու ժամանակ:

- Նախ, նշանակալից է ընկալել այն պարտավորությունները, որոնք տրվում են վարկի փոխարեն, եւ այն, որ այդ պարտավորությունների կատարումը բավականին տեւական ժամանակահատվածում ձեզ համար պարտադիր են: Հետեւաբար, պետք է հստակ որոշել, թե որքանո՞վ կայուն եւ երկարաժամկետ եկամտի աղբյուր ունեք, ի՞նչ ռիսկերի առջեւ կարող եք կանգնել պարտքը չմարելու դեպքում: Իսկ նրանից հետո, երբ համոզվեք հիպոթեքային վարկի ստացման անհրաժեշտության մեջ, հարկավոր է ուշադրությունը բեւեռել վարկի ստացման հետ կապված տարբեր տեսակի կոմիսիոն գումարների արդյունավետ տոկոսադրույքի, ամսական պահանջելի գումարը չմուծելու կամ, նախօրոք գումարի մարման դեպքում, պատժամիջոցների գումարի մարման գրաֆիկի, վարկի տարադրամի եւ վարկի ժամկետների հարցերի վրա: Որպեսզի լավ ընկալեք ստանձնած պարտավորությունների նշանակությունը, ուշադրությամբ կարդացեք բոլոր այն պայմանագրերը, որոնք ստորագրելու եք վարկի ձեւակերպման գործընթացում:

- Ի՞նչ տարբերություն կա արդյունավետ եւ տարեկան տոկոսադրույքների միջեւ:

- Արդյունավետ տոկոսադրույքը վարկային պայմանագրով նախատեսված տոկոսադրույք է, որի հաշվարկման ժամանակ ներառվում են վարկատուի կողմից վարկի հանձնման գործընթացում կատարված բոլոր պարտադիր ֆինանսական ծախսերը, իսկ տարեկան տոկոսադրույքը հաշվարկվում է առանց վարկի արժեքի լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ: Հետեւաբար, ֆինանսական տարբեր կազմակերպությունների կողմից վարկերի տրման պայմանները համեմատելիս, նշանակալից է միմյանց հետ համեմատել արդյունավետ տոկոսադրույքները եւ ոչ թե միայն տարեկան տոկոսադրույքը: Դրանով իսկ, հստակորեն կպարզեք, թե որ առաջարկությունն է ձեզ շահավետ:

- Հիպոթեքային վարկի դեպքում, ինչո՞ւ են տարբերվում տոկոսադրույքները լարիի եւ դոլարի ժամանակ:

- Ի տարբերություն այլ տեսակի վարկերի, հիպոթեքային վարկը հիմնականում երկարաժամկետ է: Տարբերվում են նաեւ երկարատեւ ժամանակահատվածում լարիի, դոլարի, եվրոյի կամ այլ կոնկրետ տարադրամի արժեզրկման հետ կապված ռիսկերը: Հետեւաբար, տեւական ժամանակահատվածում տարադրամի կայունությունը, այսինքն՝ ստացված վարկի արժեքը հնարավոր է ֆինանսական կազմակերպության համար նշանակալիորեն փոխվի: Հենց այդ ռիսկից ելնելով էլ, հիպոթեքային վարկի տոկոսադրույքը կարող է հաշվարկվել այլ տարադրամի միջոցով: Մեր պայմաններում հիպոթեքային վարկը դոլարով եւ եվրոյով հանձնելու դեպքում, առավել պակաս տոկոսադրույք են ունենում, քան նույնը՝ լարիի պայմաններում:

- Ի՞նչ է նշանակում գումարի փոփոխական տոկոսադրույքը, եւ ո՞րն է Ազգային բանկի վերաֆինանսավորման դրույքը:

- Վերջին ժամանակներում հաճախ է եղել վարկերի հանձնումը փոփոխական տոկոսադրույքով: Փոփոխական է դոլարի դեպքում ստացված լիբորը (LIBOR-London Interbank Offered Rate/Լոնդոնի միջբանկային առաջարկության դրույք), իսկ լարիի դեպքում՝ Ազգային բանկի վերաֆինանսավորման դրույքը: Դրանց փոփոխությունն ուղիղ համեմատականորեն արտահայտվում է վարկի տոկոսադրույքի փոփոխության վրա:

Օրինակ, եթե ունենք փոփոխական տոկոսադրույքով գումար 12 տոկոսով, եւ գումարի ստացման պահին Ազգային բանկի վերաֆինանսավորման դրույքը կազմում է 8 տոկոս, ապա դրա մինչեւ 7 տոկոս իջնելու դեպքում, տարեկան դրույքը նվազում է մինչեւ 11 տոկոս, իսկ բարձրանալու դեպքում՝ համապատասխանաբար ավելանում է:

Դրույքների մասին վիճակագրությունը եւ մանրամասն տեղեկատվությունը կարելի է ստանալ լարիի դեպքում՝ www.nbg.gov.ge, իսկ դոլարի դեպքում՝ www.global-rate.com կայք-էջերով:

- Ինչի՞ց է կախված տոկոսադրույքի փոփոխությունը, եւ ինչպիսի՞ն է դրա միտումը, օրինակ՝ սկսած 2008 թվականից:

- Ինչպես վարկային սպասարկումների, այնպես էլ դեպոզիտ տոկոսադրույքի փոփոխումը կարող է կախված լինել բազում գործոններից՝ սկսած մեր անմիջական ֆինանսական վիճակից ու կայունությունից եւ վերջացրած տարածաշրջանային կամ գլոբալ մասշտաբի գործընթացներ: Օրինակ, որքան կայուն ու ֆինանսապես հաստատուն է երկիրը, այնքան պակաս տոկոսադրույքով բանկերը կարող են գրավել ֆինանսական ռեսուրսներ, հետեւաբար, վարկերն էլ կտրվեն պակաս տոկոսադրույքով:

Ինչ վերաբերում է 2008 թվականի միտումներին, ապա կարող ենք ասել, որ իրավիճակը փոքրիշատե կայուն է, եւ վարկային սպասարկման գների նշանակալի ավելացում չի գրանցվել:

- Գլխավոր խորհուրդը, որը կցանկանայիք տալ հիպոթեքային վարկից օգտվել ցանկացողներին:

- Ինչպես արդեն նշեցի, հարկ է հստակորեն գիտակցել այն պատասխանատվությունը, որը կապված է հիպոթեքային վարկ վերցնելու հետ: Հարկ է հստակորեն վերլուծել կոնկրետ ֆինանսական իրավիճակը եւ երկրի անշարժ գույքի շուկայում առկա իրավիճակը: Միայն դրանից հետո, հարկ է որոշում ընդունել, թե որքանով է համապատասխանում ժամանակը հիպոթեքային վարկի ստացման եւ ձեր ցանկությունների կատարման համար:

Այն բանից հետո, երբ հիպոթեքային վարկի ստացման որոշում եք ընդունում, հարկ է մանրամասն ուսումնասիրել ֆինանսական տարբեր հաստատությունների առաջարկությունները, համեմատեք արդյունավետ տոկոսադրույքները, որոշեք, թե ո՞ր տարադրամով է գերադասելի ստանալ վարկը եւ նման հարցեր:

Նաեւ խորհուրդ ենք տալիս չմոռանալ եւ չխուսափել վարկի ստացման պայմանագրի ուշադիր ընթերցումից եւ, անհրաժեշտության դեպքում, ձեզ հետաքրքրող հարցերն առաջադրելուց:

Հիպոթեքային վարկի վերաբերյալ առավել մանրամասների մասին կարող եք տեղեկանալ հիպոթեքային բանկից: